ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

05-ը հուլիսի 2025թ.

ՈՒՂԵՐՁ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի՛ հայրենակիցներ.

Ջերմորեն շնորհավորում եմ բոլորիս ՀՀ Սահմանադրության ընդունման 30-րդ տարեդարձի կապակցությամբ: 1995թ. հուլիսի 5-ին ժողովրդական հանրաքվեով ընդունվեց նորանկախ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, որը առանցքային հիմնասյուն է մեր երկրի՝ որպես ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետության կայացման գործում:

Սահմանադրությամբ ամրագրված դրույթներն ուղղված են մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանությանը, պետականության պահպանմանն ու ամրապնդմանը, քաղաքացիական հասարակության ձևավորմանն ու զարգացմանը. ուստի ոչ միայն օրենքի, այլ նաև գաղափարական ու արժեհամակարգային տեսանկյունից Մայր օրենքը մեզ համար կարևոր սկզբունքների ամբողջություն է:

Որպես քաղաքացի և ՏԻՄ ներկայացուցիչ անվերապահորեն առաջնորդվելով Սահմանադրությամբ՝ կարևորում եմ յուրաքանչյուրիս իրավաչափ վարքագիծը և օրինապահ գործունեությունը՝ ի շահ հայ ժողովրդի բարօրության ու առաջընթացի:

Մեր համայնքների ու հայրենիքի վաղվա օրվա նկատմամբ լավագույն սպասելիքներով կրկին շնորհավորում եմ բոլորիս ՀՀ Սահմանադրության և պետական խորհրդանիշների օրվա առիթով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ